

ինչպէս անցեալ յօղուածներուն մէջ յիշատակած էինք՝ յետ մեկնութեանց կցուած է նաև քանի մը մանր կէտերու մեկնութիւններ զանազան գրքերէ՝ հանդերձ թարգմանական կարևոր տարբերութեամբ և բնագիրներով, ուր յատուկ կը խօսի թարգմանութեանց ոճին մասին, մասնաւորապէս ընդդէմ Ակիւղասի. «Ձոր և Ակիւղաս արար գրեթէ զամենայն իսկ զասունիկն Երրայեցոցն գրեաց և մրացոյց զփոսոն, և այլ և այլ ետ իմանայ»:

Համոզուած եմ թէ այս վերջի մասը հանդերձ իւր առաջին մասով կը կազմէին իւր թարգմանութեանց նախաբանը, մասաւոր ըլլալով Եւսեբիոս գիտական մեկնութեան մը ձեռնարկէ, բաղդատելով զանազան թարգմանութիւնները՝ դիտմամբ խօսած է թարգմանելու կերպին վրայ, և թէ ցայնմամ թարգմանողները ինչ սխալներ գործած են, անոնցմէ զանազան օրինակներ բերած է, սորվեցնելով հանդերձ անսխալ թարգմանելու կերպը, այն է «Թողուլ զբանիցն զառանձին պայման ըստ իւրաքանչիւր լեզուացն, և զմիտան լեզուին թարգմանել»:

Այս գիտական սկզբունքը որ իւր Լուկիանոս վարժապետէն ընդունած էր — և անշուշտ անոր ըրած սրբագրութեանց ալ հետեւած —, նա հաստատարիւմ կը գործադրէ. և մենք յառաջելով մեր բաղդատութեանց մէջ մեկնութեանս մէկ ծայրէն միւսը, տեսնելով այն զանազան տարբերութիւնները թէ թարգմանութեանց և թէ երբեմն ձեռագիրներու՝ կը յանգինք այն եզրակացութեան, թէ՛ Եւսեբիոս հաստատուն բռնելով Եթեմանսից թարգմանութիւնը իբր բնագիր —, թէ՛ հոս ալ ինչ ինչ աւելի ձեռագրական տարբերութիւններ նշանակած է —, մեկնած է Եթեմանսիցը՝ երբ երբայականին զուգընթանայ, հակառակ պարագային երբայականը միայն իսկ զԱսորին ստէպ յիշատակելով միայն իբր բաղդատութեան և լուսաբանութեան եզր կը գործածէ, գրեթէ բնաւ չէ մեկնած անոր վրայէն:

Յուսով ենք որ ընթերցողը այսքան

յայտնի օրինակներով զաղափար մ'առաւ Եւսեբիոս գործածած բնագրին և ոճին վրայ: Կը ֆիայ խօսիլ անոր հայ թարգմանութեան մասին, և զինքը ծանօթացընել մեկնութեանս ընթերցողին:

Հ. Վ. ՅՈՎԱՆՆԵՍԻԱՆ

Շարունակիկի

ՄՊԱՅԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱԼ ԳԱԿԱՌԸ

(Աղբ-բռնութեան - Պարտութեան - Եւսեբիոսի)

(Շար. տես Բազմ. 1924 էջ 36)

Մտեղէն

Երախմի. — Միտը դնում են կնուճը, շուր ամուճ, աղ, սիսեռ, լուբիա և ոսպ աւելացնում ու դնում թոնիրը եփում, ապա մածուցիկ դառած շուրը ջուկում են մսից և մէջը հաց բրդում, պղպեղ ցանում և ուտում. իսկ միտը պնակի մէջ դնում և «քուշտքուճով» ծեծում են և ուտում:

Տապակած միտ. — Գետնախնձորը կնկում են և մսի հետ սանդում (մէջը փոս, կլոր քար է) «ծէճիլով» (փայտէ մորեք է) լաւ ծեծում են: Ապա աւելացնում են մաքրած բրինձ, ալիւր, աղվա, պղպեղ, բաղի թեր, գինիղ և խառնում, յետոյ փոքրիկ զնդեր շինելով՝ ալրում և ձգում են հալած իւղի մէջ և տապակում:

Թորչի. — Գետնախնձորը կնկում են և վրան միտ, սոխ կոտորում, ամուճ են «ղազան ջուկը» և իւղով բովում. ապա աւելացնում են շուր, թեր, աղ պղպեղ և լիմոն կամ դառղա՝ ուտել, որ թթիւ, յետոյ եփում են և փլափ հետ ուտում:

Ղաւուրմա. — Կովի միտն երկու օր աղի մէջ պահում են, յետոյ դազանի մէջ դնում և մի քիչ ջրով եփում, ապա իր իւղով տապակում, սառեցնում ու դնում են կնուճը. երբ կամենում են ուտել, կնուճից մաս — մաս վերցնում են:

Խօրված (փնարաբ). — Միտը և մի քիչ էլ սոխ մանր — մանր կոտորում և վրան աղ, պղպեղ, աղվա են ամուճ, ապա երկաթէ «սիխերին» (չամփուրներին) անցկացնում, դնում են թէժ կրակի վրայ և խորովում:

Հալիմ. — Յորենը սանդում ծեծում, ապա փուլում են արեւի առաջ և չորացնում, յետոյ

քամուսն են տալիս, որ թեփը մաքրւի. ապա երկանքով աղուսմ են, հատիկները ջարդուում և դառնում են «ձաւար», որից որոշ քանակութեամբ մսի հետ ածում են ջրով լի կնուճը, աղ աւելացնում և եփում. երբ ջուրը քաշուում է և պնն դանում, վերցնում են կրակի վրայից, սոխոռած անում և ուտում. ոմանք էլ սոխոռածի փոխարէն փլակի մէջտեղը իւղ են ածում և ուտում:

Ոլխարի խաշ. — Ոլխարի ոտներն ու գլուխը տաք ջրի մէջ դնելով՝ մազերը պոկում են, յետոյ կրակի բոցի վրայ բռնելով՝ խանձում են մնացած մանրիկ մազերը և դանակով քերում: Ապա լանիում են ոչխարի թափանը (ստամոքսը, և ոտի ու գլխի հետ լցնում են ջրով լի լազանը և մի օր թողնում, որպէս զի խանձածի և թափանի հոտը գնայ: Գետոյ բոլորը միասին լցնում են կնուճը, ջուր, աղ աւելացնում և դնում թոշիքը, եփում: Ուտելիս մածուցիկ ջուրն ածում են լազանը, մէջը հաց բրդում, միսն էլ կոտորում են վրան և ուտում:

Խաշած հաւ. — Հաւը մաքրում, խաշում և ուտում են:

Տապակած հաւ. — Հաւը մաքրում և կիսանեփ անում, ապա իւղով տապակում և ուտում են:

Խորված հաւ. — Հաւը մաքրում, անցկացընում են սիւնին, ապա թէժ կրակի վրայ խորովում են:

Փորը չցրած հաւ. — Հաւի փորը մաքրում և մէջը լցնում են հիւ, մեխակ, դառչին, պղպեղ, չամիչ, մի քիչ աղ ու կարում: Ապա դազանի մէջ դնելով կրակի վրայ կիսանեփ անում, յետոյ անցկացնում են սիւնին և թէժ կրակի վրայ խորովում:

Ոլխարի կամ գոսան խորվու. — Ոլխարը կամ գառը մորթում և լաւ մաքրում են, ապա թոնիրը վառում և կրակի վրայ «անառով» լիքը մի զազան դնում և ոչխարը կամ գառը կախում հաճարի վրայ: Գետոյ թոնրի բերանը ձեփում և մօտաւորապէս 4—5 ժամ եփում:

Մէս չիփուս. — Ոլխարի կամ կովի մսի փափուկ մասերը կտորում և ձեծում են սանդուս, յետոյ գինիզ, սամիթ, պղպեղ և աղվա խառնում, ապա ձեռքերով փոքրիկ կտոր և տափակ զեղակներ շինում և իւղով տապակում են:

Տօրմա. — Կովի կամ ոչխարի փափուկ միսը մանր—մանր կտորում և մաքրած գետնախնձորի հետ սանդուս ձեծում են, ապա քիչիւղ, թախց, սամիթ, աղվա, մի քիչ բրինձ խառնում, յետոյ որովի տեղներով կակ—լակ փաթեթներում և դարսում են կնուճի կամ դազանի մէջ և եփում:

ԹԹՈՒՆԻՐ

Չահարմահալում հայերը թթուներ դնում են խաղողից, քալաւուզից, չողնտարից, գազարից, վարունգից և գալից, որոնց պատրաստում են քացախով կամ աղով և զխաւորապէս ուտում են պաս օրերին, ցամաք հասցով:

Ընտանի բոյսերից վարունգը և գալը թթու դնում են այսպէս. մօտաւորապէս տասը լիտր վարունգ և գալ լցնում են կնուճը և վրան երկու լիտր աղ աւելացնում. իսկ չողնտարը և գազարը թթու դնելիս եփում են, հովացնում, դարսում կնուճը և վրան քացախ աւելացնում: Կայ նաև խաղողի քսոցախ. — մօտաւորապէս տասը լիտր խաղող քաղում և ողկոյզ—ողկոյզ դարսում են կարսոսը, ապա մէջը խմորից մայեա աւելացնում և կարսոսի բերանը ցնիով ձեփում, յետոյ դնում են մի տաք տեղ և մօտաւորապէս երկու ամիս թողնում: Ապա քալաւուզ, մուսիլ, սոխ, պղպեղ մաքրում և ածում են մէջը:

Փաղցրաւենիք

Շիրով մուրաբա. — Դղումը կնկում, կըտորում են դազանի մէջ և կիսանեփ անում, ապա ստոնեցնում, վրան շիրա ածում և ուտում:

Դօշաք կամ շիրա. — Խաղողը տաշտի մէջ ձեռքով ճմուռ և տոպրակների մէջ ածելով՝ բերանները կապում և վրաները քար դնում, որ ջուրը քամի: Ապա քամած շուրն ածում են դազանը և փոքր ինչ տաքացնում, յետոյ մէջը «ուտտ» հող են ածում, որպէս զի խաղողի ջուրը շուտով եռ գայ: Այնուհետև հողի երեսից մաքուր ջուրը քաշում և ածում են մի ուրիշ դազանի մէջ և մօտաւորապէս տասը ժամ եփում, որ հեղձեալ թանձրանալով՝ դառնում է դօշաք: Ածում են կնուճները և պաս օրերին ուտում:

Միկոյ. — Խւրաքանչիւր տուն իր կարողութեան չափով պահում է մեղրի փեթակ և ըստանում մեղր:

Խմիչընէր

Խմիչքներից գործ են ածում թան, շարբէթ, թէյ, դառչին, սուրճ և սակաւ չափով օդի ու գինի: Սրանց պատրաստում են հենց իրենք՝ գիւղացիները, ինչ որ յատուկ է բոլոր հայաբնակ գաւառներին և գիւղերին:

Ե.

Հայաբնակ գիւղերը. — Դէյշէի, Մամուռան, Լիվա-սեան, Ներքին — Քոնարթ, Վերին — Քոնարթ, Մուշիզան, Շահրուաշ, Սինազան, Արուստա, Մամուռա, Հալիա-բազ, Բալբուռ, Սիրաթ և Ալմազարազ. — Նախկին հայաբնակ գիւղերը և վիճակադիր:

Չահարմահալում հայերը բնակուում են տասն և չորս մեծ ու փոքր գիւղերում, որոնք իրենց արտադրին և ներքին կառուցածքներով համարեա թէ իրար նման են: Այդ գիւղերը չընկալատւած են այգիներով, պարտէզներով և ծառատաննե-րով, որոնք գարնան կանաչելով՝ առանձին գե-ղեցկութիւն են տալիս գիւղերին: Աժմ տանք նրանց նկարագրութիւնը:

1. Դէյշէի

Նոր — Ջուղայից տասն և հինգ ֆարսախ հե-ռու, դէպ ի հարաւ, մի ընդարձակ տարածութեան վրայ բնակ է Դէյշէիքը, որ չորս կողմից պա-տած է քառակուսի ցեխաշէն պարսպով և ունի մի դարբաս (դարազա): Դէյշէի պարսկերէն բառ է. դէշ նշանակում է գիւղ, իսկ շէի՝ կրօ-նապետ: Գիւղացիների տանով՝ գիւղը չիւնէ է տւել մի շէի և կոչել Դէյշէի, այսինքն շէիի գիւղ: Դա զուտ հայաբնակ փոքրիկ մի գիւղ է, ուր չորս տարի առաջ բնակւելիս են եղել 25 տուն հայեր. սակայն ջրի պակասութեան և մո-րեխի ու ցրտի պատճառած միասնելի հետեան-քով՝ գիւղացիներից շատերը թողնում են գիւղը և գաղթում Նասէրի և Չահարմահալի հայաբնակ միւս գիւղերը: Աժմ շատ քիչ է հայերի թիւը, ընդ ամենը 15 տուն են, 56 շնչով, որի 29 — ը իգական է և 27 — ը արական. պանդխտութեան մէջ գտնուում են 5 հոգի, որոնք տնտեսական հանգամանքների պատճառով գաղթել են Հնդկաս-տան:

Բնակիչները Դէյշէիում հաստատւել են վեց տարի առաջ, 1914 թիւն. եկել են Չահարմա-հալի Լիվատեան (13 տուն), Վերին — Քոնարթ (4), Յաթի — Քոնարթ (1), Սիրաթ (2), Սինազան (2), Մա-մուռա (1), Մուշիզան (1) և Մամուռան (1) գիւղե-րից, ընդ ամենը 25 տուն: Տները չիւնած են հո-ղից և ծեփած յարդով շաղխւած ցեխից. ընդ-հանրապէս միյարկանի են և շինւած են կողք — կողքի:

Հողատիրութեան տեսակը խանական — կաւ-ւածատիրական է. պատկանում է Սադգամ Սաւ-

թանի (Հաճի Իբրահիմ խան) Բախտիարցու մեծ որդուն՝ Աթոլ Ղասիմ խանին: Գիւղացիները հո-ղազուրկ ուսյաթներ են և տնով ու հողով պատկանում են խանին. նրանց մշակում են խանի հողերը և իրենց ստացած արդիւնքից տա-լիս են հետեւեալ չափով. ջրային ցանքսի երկու բաժինը իրենք են վերցնում, մէկը խանին տա-լիս. դաշտային ցանքսի մի բաժինը խանին են տալիս, երեքը իրենք վերցնում, իսկ սարի (դէ-մի) ցանքսի չորս բաժինը իրենք են վերցնում, մէկը խանին տալիս: Բացի այդ՝ տարեկան վը-ճարում են խանին.

Ոչխարին	10 շայի
կովին	2 զոռն

Հողը հերկում են վեցկիով, որին լծում են մի զոյգ եզր և Գանոււ են ցորեն, գարի, հաճար (քիչ է), սոսեռ և այլն: Ջրի կողմից գիւղը շատ աղքատ է. օգտւում են գիւղի արեւելեան կողմը գտնուող երկու քեահրէզներից (ջրմուղներից), ուրոնցից մէկը գտնւում է գիւղից 50 քայլ հեռա-ւորութեան վրայ, իսկ միւսը՝ 1500:

Կենդանիներից պահում են կով, ոչխար, եզ, էշ, ձի (1 հատ):

Գիւղը ոչ եկեղեցի ունի, ոչ էլ դպրոց. գիւ-ղացիները խարխափում են խոր սգիտութեան մէջ, ընդ ամենը 3 գրագէտ կայ:

Այստեղ գիւղացիները շատ են նեղանում դրա-ցի պարսիկ Բարատսոբաջիներից, որոնք յաճա-խակի գիւղի արտերի վրայ յարձակելով՝ տա-նում են հունձքը: Գիւղատէրը ոյծ չունենալով՝ չի կարողանում պաշտպանել գիւղացիների իրա-ւունքները, որով նրանք օրըստօրէ են նեղակուում են տնտեսական ծայրայիտ քայքայման:

Այս տարի վախճանւել են 14 հոգի: Գերեզ-մանատունը գտնւում է գիւղի հարաւային կողմը, 400 քայլ հեռավորութեան վրայ:

Գիւղի քանդակուղան է Պ. Թաղէոս Պողոսեան, որ տեղում է ծանր պարտքերի տակ:

2. Մամուռան

Դէյշէիից դէպի հարաւ, երեքուկէս ֆարսախ հեռու, Մաղար — դոխտարի հիւսիս — արեւմը-տեան կողմը, մի ընդարձակ դաշտի վրայ փուած է Մամուռան գուտ հայաբնակ գիւղը, որ ընդ ամենը 73 տարւայ հիմնադրութիւն է: Հայ գիւ-ղացիները հաստատուել են 68 տարի առաջ, 1852 թիւն: Աժմ բաղկացած են 43 տանից, 218 շնչով, որի 120 — ը արական է և 95 — ը իգական. սրանից 23 հոգի գտնւում են պան-

դըխտութեան մէջ – Նոր–Ջուղա, Նասէրի, Հընդ–կաստան և այլ քաղաքներում:

Գիւղն իր անունն ստացել է մամուր (պարսկաստանում մի պաշտօնայն է, որը դատաւորի վճիռն է իրագործում) պարսկերէն բառից: Գիւղացիների ասելով՝ սկզբնական շրջանում գիւղում բնակւելիս են եղել մամուլ (մամուր բառի աղատադուսն է) կոչւած լուերը. երբ նրանք հեռանում են, գիւղը նրանց անունով կոչւում է Մամուլ:

Գիւղը շրջապատւած է քառակուսի, աղիւսէ (միայն դրսից) հաստ պարսպով, որ ունի չորս բուրձեր (աշտարակներ) և մի մեծ դարբաս: Տները երկարականի են, որոնց վերին մասում բնակւում են գիւղացիները, իսկ ցածի մասում պահում են իրենց կենդանիները: Գիւղի արևմտեան կողմը զարդարւած է քղինների և բարդիների տիկարաններով և մի փոքրիկ պարտէզով, ուր գիւղացիները մշակում են դդում, վարունգ, ձմերուկ, քալ և այլն: Արտերը փաւած են գիւղի արևմտեան և հարաւային կողմերը: Օգտուում են երեք ջրմուղներից, որոնք սկիզբ են առնում Զարբազարի դաշտից. դրանցից երկուսը արեւելքից դէպի հիւսիս գողգահեաական ուղղութեամբ հոսելով՝ միանում են միմեանց և ոռոգում գիւղի արևմտեան կողմի արտերը, իսկ երրորդն արևելեան ուղղութեամբ ընթանալով՝ ոռոգում է գիւղի հարաւային կողմի արտերը:

Հողագործութեան ձևն « առբարի » – կաւաժա տնտեսական է. պատկանում է Ֆարաշուլա խանի որդիներին՝ Ասադուլա (Հէսամ սուլթան) և Աբգուլա խաներին: Գիւղացիները հողագործիկ են. նրանք մշակում են խանի հողերը և ստացւած արդիւնքի¹ մասը տալիս են նրանց: Նաև տարեկան վճարում են.

Ուխարին	1) շալի
Կովին	2 դոան
Էգ ձիուն	3 »
Ջորուն	3 »

Սակայն այդ դեռ բոլորը չէ. կաւաժատէր – խաները, որոնք տգէտ և անբարեխիղճ մարդիկ են, իրենց ցանկութեան համաձայն հարստահարում, կեղեքում են խեղճ գիւղացիներին և նրանց տնտեսապէս քայքայում: Աստեղ առաջ բերե՛ք մի փոքրիկ նմուշ, գաղափար տալու համար՝ թէ խաների ինչպիսի չափերով շահագործում են իրենց առյաւթներին. իւրաքանչիւր տարի նրանք բռնութեամբ առնում են գիւղացիներից 100 լիտրից 4 մաս ցորեն, 7200 լիտր յարդ, 7200 լիտր վառելիք (գազ), 72 բեռ (իւրաքանչիւր բեռ 20

լիտր է) աթար (վառելիք), 480 բեռ կանաչ շաւղաւ, Բացի ի սրանցից՝ գիւղացիներին իրենց համար ցանկէ և մշակել են տալիս երկու դոնգ շաւղաւ և միջին հաշւով տարեկան 50 մարդ աշխատեցնում իրենց գործերի վրայ: Ահա մի այլ նմուշ. 1916 թւին մորեխը փչացնում է հունձքը, որով գիւղացիները 1917 թւին ցանկու սերմ չեն ունենում: Խանը նախագալով իրեն հասնելիք ծանր հարւածը՝ գիւղացիներին սերմացու է փոխ տալիս և պարսկերէն աւետարանի կողքին գրում է հետեւեալ պայմանագիրը.

Չարգաղուեց, որ իմ կողմից 1500 լիտր ցորեն և գարի, որի 900 լիտրը ցորեն և 600 լիտրը գարի է (շալի քարի), իմ հրեք դոնգի բոլոր ձողաւ գործնիրմ տամ: Այն թիւը, որ այս պայմանաթուղթը գրւում է միմէն հիկզ տարի ժամանակով զոգազործի մօտ փոխ (մուսաղլա) լիմի, յի՛նչ Տէրմ մի արասցէ, կրկին մորեխը կերաւ, Աստած անթի մրա հօրմ ու մօրը, որ յետ կ'պահանջէ, խոստաւում եմ, որ իմ սեղրուղմ էլ (ովայթ) 4էնց այս 1500 լիտր միմսը, որ զոգազործի մօտ ունիմ օգլմմ մրամց, Աստծու խօսքը, որ այս աւետարանում է, վկայ լիմի իմ և ձողազործի մէջ, Այս մի քամի բաւոր թիւղ յիւլի, Թիւմ 1330 – 1333, էլ ոչ որ ձողազործից ոչիմ իրաւուքը չուծնայ պահանջիլու:

ԿԵԻՔ

ԱՍԱԴՈՒԼԱ

1917 թւին մորեխը դարձեալ ուտում է հունձքը և խանը հակառակ իր խոստմնադրին՝ սերմը տուկոսով հանդերձ բռնութեամբ առնում է գիւղացիներից:

Ընդհանուր երեսոյթն այն է, որ կաւաժատէր խաներն առասելի կերպով ճշնում, կեղեքում և շահագործում են խեղճ գիւղացիներին: Այսպիսի պայմաններում նրանք օրըստօրէ տնտեսապէս հիւժուում և գիժմում են դէպի աղքատութիւն: Եւ արդէն իրանցից շատերը տնդում են ծանր պարտքերի տակ: Այժմ գիւղացիներից 47 հոգի Աբգուլա խանին և մի քանի ուրիշ անձնաւորութիւնների պարտական են 1323 թուաման փող և 3130 լիտր ցորեն:

Այս մտայն պատկերի վրայ աւելացնենք շրջալայ Ղաշիէի Թօքթերի ասպատակութիւններն ու աւարառութիւնները, որոնք գործում են կազմակերպւած և զինւած ուժերով. նրանք գլխաւ

ւորապէս զարնանը և աշնանը, շատ անգամ, հէնց օրը ցերեկով, յարձակում են գիւղացիներէ, որի հօտերի վրայ և աւարի են տալիս գիւղի ոչ խարները: Այս տարի (1920 թւին) հանդից տաւ նում են գիւղացիների 379 ուխարները:

Հորը մեծ մասամբ դժմի է, իսկ փոքր մասը ջրովի. հերկում են վէցիկով և ցանում զարի, ցորեն, հաճար, սոսնե, ոսպ, կտաւահատ, քիսին, նուշ և այլն:

Այստեղ նոյնպէս կրթական գործը շատ ան միեթար դրութեան մէջ է գտնուում. գիւղը դպրոցից զուրկ է և ընդամենը եօթը հոգի զրազէտ կայ:

Գիւղի ճիշդ մէջտեղում կանգնած է Ս. Յովհաննու եկեղեցին. դա աղիւսաշէն, փոքրիկ զբմբէթով, անշուք մի եկեղեցի է, որ շինել է տեւել, 1856 թւին, Զաւրշուքուրի Լաճի - Մամազախանը: Եկեղեցու պատերը դրսի կողմից շինւած են թրծած աղիւսից, իսկ առաստաղը կամարակապ է և հանգչում է աղիւսից շինւած սիւնների վրայ:

Եկեղեցու սեղանի առջև ծածկւած է մի երկար քարով, որի վրայ փորագրւած է.

ՇԻՆՈՒՄՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ Վ. Թ. 1856

Սեղանի աջ ու ձախ կողմերում շինւած են մի - մի փոքրիկ խորաններ, ուր պահում են եկեղեցու անօթներն ու զգեստները:

Եկեղեցու դրան վրայ ամրացրած է քառակուսի մի փոքրիկ մարմարէ քար, որի վերևի մասում քանդակւած է մի խաչ, իսկ ցածի մասում գրւած է.

ՍԲ. ԽԱԶՍ ՅԵՇԱՏԱԿ Է ԱՌԳԵԼԻՆ Թ. ՀԲ.

Եկեղեցում կայ ձեռագիր մի աւետարան. դա կաշէկազմ, բամբակի թղթի վրայ բոլորագիր գրւած մի աւետարան է, որի առաջին երեսում կայ արծաթեայ, ականազարդ մի խաչ: Աւետարանը զարդարւած է Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհան աւետարանիչների չորս ոսկեզօծ պատկերներով, որոնք նկարած են բաւական աշուղ վրձինով: Թուականը յայտնի չէ, միայն Ղուկաս աւետարանի նկարի տակ գրւած է.

« Զատահկ օրու անուն արեղա եմ սե երես
« ամ կարգաւորաց և պարտական բաղով քան
« քարաց. նկարողս յիշեցէր ի մաքրափայլ յաւ
« դարս քեր ով սուրբ ընթերցողք և կարգապողք

« հանդերձ ծնողաւքն իմովք և Աստուծ զձեզ յիշէ
« իւր միւս անգամ գալստեանն ամէն. և անմե
« զաղդի լերուք աղաշենք զձեզ ով եղբարք, ընդ
« նմին և զստացող սրայ Ղազարիայ քահանայ
« յիշեցէք և Աստուծ զձեզ է »:

Բաց ի սրանից՝ եկեղեցում կայ « Թուի - Մանուկ » անունով կաշէկազմ և տպագիր մի այլ աւետարան, որ բաղկացած է 479 էջից: Աւետարանը ներսից զարդարւած է չորս աւետարանիչների պատկերներով. դրսից առջևի կողքի վրայ քանդակւած են արծաթեայ խաչեր, իսկ ետևի կողքի վրայ գրւած է.

ԽԱԶՍ ՅԵՇԱՏԱԿ Է ՎԱՐԹԻԿԻՆ ԳՈՒԼԻՆԱՐԻՆ, ԹՎԻՆ Ռ. Ճ. Ժ. Ը.

Աւետարանն ունի տարեկան բազմաթիւ ուխտաւորներ:

Գիւղում գոյութիւն ունի « Շահթեր » երիտասարդաց միութիւնը, որ հիմնւել է 1916թ. Մարտ 2 - ին: Ընկերութեան ծրագրի էական մասերն են.

1. Անդամներին վարժեցնել մաքուր խօսակցութեան:

2. Ամբողջ մի անգամ դասախօսութիւններ տալ:

3. Անդամներին վարժեցնել ընկերութեան, աղքատասիրութեան, առողջ մտածողութեան, լրջութեան, վսեմութեան, կարգապահութեան, քաղաքավարութեան, բարեգործութեան, արիութեան (վստահութեամբ արտայայտել ամէն մի զգացում պարզօրէն):

Ընկերութեան անդամներն ամիսն մի անգամ ժողով են գումարում և տալիս պարբերական դասախօսութիւններ կրթական, բարոյական, հասարակական և այլ խնդիրների շուրջ: Ընկերութիւնն իր նիւթական միջոցները ձեռք է բերում անգամավճարներից և նւիրատուութիւններից:

Միութիւնն հրատարակելու է նաև մի պաշտօնական օրգան: Անդամների թիւը հասնում է 35 - ի: Ստանում են Թէհրանի « Առաւօտ » շաբաթաթիթերը:

Գիւղն ունի երկու քանդակուղա. Ղուկաս Սարուեան և Գալուստ Յովսէփեան: Սրանցից առաջինը բարի, ազնիւ և անշահախնդիր մի ծերունի է, որ կանգնած իր կոշման բարձրութեան վրայ՝ պաշտպանում է գիւղացիների շահերը, իսկ երկրորդը՝ անաւանական և ողորմելի մի տաւառտէր է: Գիւղի հարաւային կողմը, 100 քալ հեռաւորութեան վրայ, գտնուում է աղաների դաշն, իսկ հիւսիս - արեւելեան կողմը, 400 քալ հեռու, ընկած է գերեզմանատունը:

Գիւղն ունի մի ջրաղաց և երկու հնոց, ուր գիւղացիները աղիւս են պատրաստում:

3. Լիվասեան

Մամուռանից¹⁾, Ֆարսաի հեռու, դէպի հարաւ, մի ընդարձակ դաշտի վրայ ընկած է գուտ հայաբնակ լիվասեան գիւղը, որ Չահարմանայի ամենահին գիւղերից մէկն է: Հիմնւել է Եահ—Աբբասի ժամանակ, 1670 թիւն: Թէ ինչո՞ւ գիւղը Լիվասեան է կոչուում, գիւղացիներն իրենք էլ չգիտեն:

Գիւղը չորս կողմից զարգարւած է չինարի, բարդեհուու, ուռնետու տնկարաններով և փոքրիկ պարտէզներով: Բայց գիւղի զարդը կազմում են երկու փոքրիկ առուները—Ջառահենց առու և Դպրոցի առու: Գրանք սկիզբ են առնում Փիւղից 1500 քայլ հեռաւորութեան վրայ ընկած, Գեանդուման պարսկաբնակ գիւղի արեւելեան կողմը գտնուող բազմաթիւ աղբիւրներից, որոնք բղիւնելով՝ կազմում են մի մեծ գետ, որ սեւից ջուրը հանդարտ հոսելով՝ ոռոգում է նախ Գեանդումանի արտերը, ապա ընթացքն ուղղւելով դէպի արեւելք, բաժանւում է երկու ճիւղի: մի ճիւղը, որ կոչւում է Ջառահենց առու, ոռոգում է Լիվասեանի հարաւային կողմի արտերը, իսկ միւսը, որ կոչւում է Դպրոցի առու, ոռոգում է գիւղի հիւսիսային կողմի արտերը: Այնուհետև երկու քոյր գետակներն իրենց ընթացքը շարունակելով դէպի արեւմուտք, գնում գրկախառնւում են նախ Գետոյի առի հետ, ապա միանում Կուլի ջրին և կազմում մի մեծ գետակ, որ լողորպտոյտ կտրում է Յածի—Քօնարքի, վերին—Քօնարքի, Բժկերտի, Շամսաբադի դաշտավայրերը, յետոյ լեռների միջով օձապտոյտ հոսելով՝ գնում միանում է խոսանա գետակին և նրա հետ անցնում դէպի Նասէրի:

Շատ տարիներ առաջ այս գիւղը հղել է նշանաւոր և կեդրոն մի գիւղ, բայց այժմ մեծ մասամբ աւերակ է. բնակիչների թիւը ժամանակի ընթացքում նւազել է և գիւղը կորցրել իր առաջւայ փառքը: Այժմ բնակիչները բաղկացած են 50 տնից, 206 շնչով, որի 100—ը արաբական է և 106—ը իզգական: Դրանցից հինգ տունը թօշնեջին են, իսկ պանդխտութեան մէջ են 40 հոգի, որոնք գտնւում են Նոր—Ջուլա, Թէհրան, Բաշտ, Նասէրի, Կալիվաթա, Բասրա և Բաղդադում:

Գիւղը բաղկացած է երեք մասերից. — 1) Ջառահենց դալէ, — 2) Ժամի Դալէ և 3) Դրսի Դալէ: Վերջինս կիսով աւերակ է: Այստեղ փողոցները

նեղ են և ծուռ ու մուռ. տները երկյարկանի են և շատերի առաջ կան փոքրիկ պարտէզներ,

Գիւղում գոյութիւն ունի «Պօպօխան» Ազգ. դպրոցը, որ փուլած է գիւղի հարաւային կողմը, 15 քայլ հեռաւորութեան վրայ. դա միյարկանի, չորս կողմը պարսպով շրջապատւած մի շինուածի է, որի չորս կողմը զարդարւած է բզնէնների և բարդիների տնկարաններով: Հիմնւել է 1904 թիւն, օժանդակութեամբ տ. Պօպօխանի և Բազրատ վրդ. (այժմ եպիսկոպոս) վարդապետների նախաձեռնութեամբ: Շէնքը բաղկացած է վեց սենեակներից և ունի մի գրադարան, ուր կան մօտ 143 կտոր հայերէն գրքեր և մի քանի հատ կիսատ—պատ պարբերական հրատարակութիւններ:

Գպրոցն երեք տարի է ինչ գոց է, շնորհիւ այն հանգամանքի, որ նիւթական պայմանները շատ անձուկ են և գիւղացիներն էլ վերին աստիճանի շահաւէթ լինելով՝ ո՞չ մի նպաստ չեն տալիս, միշտ դրսեք եկած օգնութեան են սպասում, որով տուժում է թէ՛ դպրոցը և թէ՛ մատաղ սերունդը:

Գիւղացիներից 20 հոգի միայն գրագէտ են: Գիւղի ճիշդ մէջտեղում է կանգնած Ա. Ասաւածաձին անունով եկեղեցին. դա կամարակապ գմբէթով անշուք մի եկեղեցի է, որ կառուցւել է 1856 թիւն: Շինած է մասամբ քարէջից, մասամբ էլ աղիւսից: Ունի երկու խորան և մի փոքրիկ զանգակատուն, զարդարւած երկու փոքրիկ զանգակներով:

Եկեղեցում կայ երեք ձեռագիր աւետարան. 1) Ա. Գեորգ, որ գրւած է բամբակի թղթի վրայ. առջինի մի էջը միայն մագաղաթ է, իսկ միւս էջը գեղարուեստական ճաշակով ոսկեգօծւած է և ծաղկանկարւած. 2) Ա. Առաքել, կաշէկազմ անպանոյճ մի աւետարան է, որի առջին կազմը զարդարւած է արծաթեայ փանդակներով. բաղկացած է 236 էջից և գրւել է 1267 թիւն. 3) Ա. Յովհան, որ թղթեայ մի աւետարան է. միայն առջին մասում կայ մագաղաթեայ երկու թերթ:

Գիւղում գոյութիւն ունի «Նյաստակ» ընկերութիւնը, որ այժմ քայքայւած դրութեան մէջ է գտնւում, շնորհիւ այն հանգամանքի, որ անդամներից Սուքիաս Միրզախանեան, Ռուստամ Ռուստամեան, Մկրտիչ Միրզայեան և Մարտիրոս Ղարիբեան Միութեան փողը տոկոսով պարտք են վերցնում և զանազան պատրուակներով էլ յետ չեն վճարում, որով անդամների մէջ երկպառակութիւն է ծագում և ընկերութիւնը կազմալուծւում:

Գիւղն իր հողերով առբարի — կալածատիրական է. կալածատէրն է Մօնազէմ էլ — Մօլթ (Նասիր Դուրի խանը). գիւղացիներին եօթը հոգի հող ունին Գօյի առէի մօտ, Ճաքեալները հողագուրկ ուայեաթներ են, որոնք բերքի ¹/₃ մասը տալիս են առբարին, իսկ աֆրոնից ստացած արդիւնքի երեք մասը իրենց են վերցնում, մի մասը առբարին տալիս: Բացի այդ տարեկան վճարում են.

Կովին	2 դան
Էգ ձիուն	3 »
Ջորուն	3 »
Ուշարին	10 շափ

Գիւղատէր խանն առնում է նաև մի շարք անասուն հարկեր. — 100 բեռ (2000 լիտր) յարգ, 100 լիտր շաղառ և դուռա, նաև տարեկան 10—20 ձի և ջորի է ուղարկում գիւղ, որպէս զի գիւղացիներն իրենց հաշին պահեն: Բացի այդ՝ 8—10 մարդիկ և 50 էջ է տանում գիւղին և իր գործերի վրայ աշխատեցնում: Այսպիսի կամայական հարկերի հետեանքով գիւղացիները հետգհետէ քայքայւում են և զրկւում իրենց ապրուստի միջոցներից: Այս տարի (1920) ծայրայեղ չքաւորութեան պատճառով գիւղից գաղթել են ութը տուն:

Հողն ամբողջապէս շրջով է, դէմի չունի: Հերկում են մի զոյգ եգ լծած վէցիկով. ցանում են գարի, ցորեն, խաշխաշ (միայն այս գիւղում ցանում են), կտաւահատ, համար և այլն:

Գիւղի հարաւ — արևմտեան կողմը, 5(Ք) քայլ հեռաւորութեան վրայ փուռն է գերեզմանաւ տունը, ուր կայ 229 տարւայ տապանաքար: Գիւղում կայ երկու կրպակ և մի ջրաղաց:

Գիւղի քեաղխուղան է Արիստակէս Մ. Մէհարեան, որ ագնիւ և գիտակից մի տանուտէր է: Այս գիւղում է ծնւել յայտնի հերոս Աբրահամ խան Բախտիարցին, որ իր գործած քաջագործութիւնների համար չքանդաններ է ստացել պարսից շահից և հերոս Անդրանիկից: Պարսկական յեղափոխութեան ժամանակ եղել է նա Եփրեմ խանի թիկնապահը. այնուհետև, 1915 թիւին, մասնացել է վանայ հերոսամարտին: Դրանից յետոյ, 1917—8 թ. իր խմբով գործել է Ուրմիոյ, Սալմաստի և Խոյի չրջաններում և նշաւաւոր հանդիսացել իր մղած կռիւներով: 1921 թիւն պարսից կառավարութեան հրամանով անցել է Ձէնջէնի և Խամսայի չրջանը և յարձակւելով ապստամբ էմիր Էֆշարի վրայ, գերի է բռնել և ազատել պարսից տէրութիւնն իր 70 տարւայ ապստամբ թշնամուցը:

Վ. Լիևնա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌՆԱԳԻՐԲ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմ. 1924, էջ 41)

Մեծկակ հատոր մ'է Զեռագիրս. կը կրէ 1320 թուահամարը Ս. Ղազարու Մտաննադարանին:

Մեծութիւնն է՝ 28 հր. մեղր, լայնութիւնը 20 հր. մեղր, իսկ թանձրութիւնը 4 հր. մեղր: Ունի ծաղկատիպ էջերով հաստ կաշեայ կողքեր, խիստ լաւ կազմուած և մաքուր պահուած:

Թուղթը բամբակեայ է ողորկ և փայլուն, կը բաղկանայ 165 թերթէ՝ 370 էջ միասին գրութեամբ, որ նոսր է, խիստ գեղեցիկ և հեշտիւ ընթեռնի:

Առաջին էջին վրայ գրուած է թէ բժշկարանս շարադրուած է՝ ոչ թէ քաղաքացիներու, որոնք միշտ բժիշկ ունին իւրենց մօտ, այլ գիւղ տեղուանք բնակողներու համար, զի ասոնք զուրկ են բժիշկէ և պէտք ունին որ իրենց հիւանդութիւններուն դարման տանին:

Մտածումը խիստ գովելի է ուրեմն ընդունինք թէ գիւղացիներու համար պատրաստուած բժշկարան մ'է այս:

Ըստ այսմ՝ Հեղինակը իւր գործին ցանկը կը գնէ՝ և կը գրէ հետեւելու.

« Յանկըն ըսկիզբն եղաք գլխաւոր ցաւ « Լերու անուանըն, Ու, Բ, բառով որ դիւ « րաւ գտանիցես. Տես թղթահամարն, « Երեսն, վէ մէկ թուրլու ցաւոյ քանի « կերպ իւրն կայ. Թէպէտ բազում ցաւ « կայ մարդոյս վրայ. այս փոքրիկ Հէ « քիմարանիս մէջն չիկայ. և վս քաղա « քացոց համար չէ այս Հէքիմարանս, « որ բազում բժիշկ կան, և կարօտ չեն « այսօր: Այսքան շանք արարաք աշխա « տեցաք, որն գրոց, որն բրոց, և որն « բժշկաց, առնելով գրելով, զի դուրս « տեղութիւնն և գիւղորայքն որ բժիշկ չի « գտվիր, այս փոքրիկ Հէքիմարանիս նա « յելով բժշկութիւն առնիցեն հիւանդաց